


Ավարտական ատեստավորման վերաբերյալ շրջանավարտների շրջանում անցկացված հարցման արդյունքները

2016-2017 ու.ս. տարի


Հարցմանը մասնակցել են ընդհանուր բժշկության և ստոմատոլոգիական ֆակուլտետների 550 շրջանավարտ, ովքեր կազմում են շրջանավարտների 52.3%-ը: Անվավեր հարցաթերթիկները առանձնացվել են և վիճակագրական վերլուծության են ենթարկվել 483 հարցաթերթ, որոնցից 273-ը ընդհանուր բժշկության ֆակուլտետ, 210-ը ստոմատոլոգիական ֆակուլտետ:


Հարցման մասնակիցները, ըստ ավարտական ատեստավորման տարբեր փուլերում ստացած գնահատականների, բաշխվել են հետևյալ կերպ





Հարցերին տրված պատասխանները բաշխվել են հետևյալ կերպ

1. Բավարարվա՞ծ եք Ձեր ստացած գնահատականներով







2. Եթե ոչ, ապա հատկապես ո՞ր փուլում ստացած գնահատականը Ձեզ չի բավարարել





3. Որքան՞ով էին օբյեկտիվ հանձնաժողովները քննությունների ժամանակ (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ արտահայտված ոչ օբյեկտիվ մոտեցում, 5-ը՝ խիստ օբյեկտիվ մոտեցում)

Գործնական հմտությունների փուլ





Բանավոր քննության փուլ






4. Ավարտական ամփոփիչ առեստավորման քննությունների ժամանակ.


Ա. դուք ունեցել եք բավարար ժամանակ քննություններին պատրաստվելու համար




Բ. դուք ունեցել եք բավարար նյութեր՝ քննություններին պատրաստվելու համար




Գ. քննություններում ընդգրկված հարցերը բխում էին առարկայական ծրագրերից



Դ. քննություններում ընդգրկված հարցերն ու առաջադրանքները ստուգում էին գիտելիքներ կամ կարողություններ, որոնք Ձեզ անհրաժեշտ են լինելու մասնագիտական գործունեության ընթացքում




Ե. հարցաշարերում կային հարցեր, որոնց, ըստ Ձեզ, հնարավոր չէր պատասխանել, քանի որ ուսումնասեղու ընթացքում դուք հնարավորություն չէք ունեցել ստանալ նման գիտելիք կամ կարողություն (եթե այո, ապա նշեք օրինակներ)




Նշվել են հետևյալ օրինակները

Ֆլեգմոնա, արցցես վիրաբուծությունից, վիրահատությունների տեխնիկա և նկարագիր, վիրաբուծությունից արյան հիվանդություններ, պարոդոնտ, հորմոնալ բուժման կարգը, կարդիոսկլերոզ, ինտենսիվ թերապիա սրտաբանությունից, իմպլանտալոգիա, թոքի աուսկուլտացիա, ԴՇԾ արատների բուժում, բարդություններ, ասթմայի հատուկ ձևերի բուժում, 7.8 րդ պսակներ օրթոպեդիայից:



5. Ձևավորված միջավայրը որքանո՞վ էր նպաստում Ձեր ունեցած գիտելիքների և կարողությունների լիարժեք դրսևորմանը (գնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ Ձեզ զգում էիք կաշկանդված, 5-ը՝ ստեղծված էր անկաշկանդ միջավայր, որը լիովին նպաստում էր Ձեր գիտելիքների և կարողությունների դրսևորմանը)




6. Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած տեսական գիտելիքներով (զնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



7. Որքանո՞վ եք բավարարված ուսումնառության տարիների ընթացքում Ձեր ստացած գործնական հմտություններով (զնահատեք 1-5 բալային սանդղակով, որտեղ 1-ը՝ բացարձակ բավարարված չեմ, 5-ը՝ լիովին բավարարված եմ)



8. Կցանկանայիք արդյոք ավարտական ամփոփիչ ատեստավորման յուրաքանչյուր փուլում հանձնել մեկ միասնական քննություն բոլոր քննական առարկաներից և ստանալ մեկ գնահատական որոնք երեք փուլերի արդյունքում կձևավորեին ավարտական ընդհանրական գնահատականը



Շրջանավարտների կողմից նշվել են հետևյալ բնույթի առաջարկներ և նկատառումներ (ներկայացվում են խմբավորված)

- Հանել բոլոր քննությունները, ստեղծել նոր միասնական ավելի արդյունավետ համակարգ, ուսանողների շարունակական կրթությանը վերաբերող, որը կլինի օրդինատուրա ընդունվելու քննություն:
- Նյութերը՝ թղթային տարբերակով, ավելի շատ լինեն, տրամադրել աղեկվատ և նորացված նյութեր՝ ժամանակին համահունչ (հնարավորինս շատ լինի հայերեն տարբերակով գրականությունը):
- Գործնական հմտությունների ժամանակ պահանջները հստակեցվեն, հմտությունների ստուգման փուլը չի ծառայում իր նպատակին:
- Թեստային ամփոփիչ քննությունը լիներ առանձին-առանձին՝ ըստ առարկաների:
- Քննությունների ավելի դիսկուսիվ անցկացում:
- Գիտելիքների և տրամաբանական մտածողության ստուգում և ոչ թե մեխանիկական հարցում՝ հիմնված անգիր արված թեստերի վրա:
- Հանձնաժողովի կողմից հնչում էին հարցեր, որոնց հնարավոր է պատասխանել միայն երկարաժամկետ աշխատանքային փորձի արդյունքում:
- Քննությունները իրականացվեն մեկ փուլով, կամ գրավոր, կամ բանավոր:
- Հանձնաժողովի անդամները ծանոթ լինեն ուսանողին տրված նյութերին:
- Դասապրոցեսը շուտ դադարեցնել, որպեսզի ժամանակը բավարար լինի պարապելու համար:
- Քննական հարցաշարում ընգրկված հարցերի ծավալի քչացում և սահմանների հստակեցում:
- Պատասխանող ուսանողի ձայնը խանգարում է պատրաստվող ուսանողին, իսկ ձայնագրման պրոցեսում սեփական ձայնը շփոթեցնում է ուսանողներին:
- Բարելավել ուսումնամեթոդական բազան:
- Հանձնաժողովի անդամները լինեն ավելի նրբանկատ՝ հաշվի առնելով ուսանողների հոգեվիճակը:
- Պրակտիկ և գործնական աշխատանքների բարելավում:
- Դասաժամերը առարկաների մեջ անհավասար է բաշխված (ստոմ. Ֆակ.)
- Օրթոպեդիայի ամբիոնի դեպքում հանձնաժողովի կողմից տրված հարցերը չեն համապատասխանում իրենց տրված նյութին: